# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՆԱԽԱԳԱՀ

Երևան 0009, Իսահակյան 28
Հեռ. (010) 52-83-70, (010) 52-94-32
Էլ.փոստ: secretariate@tvradio.am
www.tvradio.am


14.12.11թ. № 01-450

Հայաստանի Հանրապետության վարչապետ

պարոն Տ. Սարգսյանին

Մեծարգո պարոն վարչապետ

Ձեզ է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և ՀՀ ֆինանսների նախարարի դրական եզրակացությունը:

Առդիր՝ 12 թերթ:

Հարգանքով՝

Գ. Ամալյան


ՀՀ ...
051-37038
14 12 11

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_______ դեկտեմբերի 2011 թվականի N ______ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում և փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. օգոստոսի 12-ի N 1370-Ն որոշմամբ հատկացված նոր տարածքի աշխատանքային սենյակների և նիստերի դահլիճի կահավորման, տեղեկատվական ցանցի և հաղորդակցական համակարգի ստեղծման, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի մշտադիտարկման համակարգի համալրման և արդիականացման նպատակով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին հատկացնել 24,500.0 հազ. դրամ՝ «Վարչական սարքավորումներ» հոդվածով:

3. Սահմանել, որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը սույն որոշման 2-րդ կետում նշված գնումներն իրականացնելու է բանակցային ընթացակարգ կիրառելու միջոցով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի _____-ի N _____ - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ

(հազ. դրամ)

| Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման | | | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) |
|---|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | | տարի |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ | 0 |
| | | | այդ թվում՝ | |
| 08 | | | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | (9,500.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | 03 | | Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ | (9,500.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | | 01 | Հեռուստառադիոհաղորդումներ | (9,500.0) |
| | | | այդ թվում՝ | (9,500.0) |
| | | | 01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններ պահպանում | (9,500.0) |
| | | | Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով | (9,500.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ | (9,500.0) |
| | | | այդ թվում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | |
| | | | -Էներգետիկ ծառայություններ | (2,000.0) |
| | | | -Կապի ծառայություններ | (3,500.0) |
| | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | (4,000.0) |
| 11 | | | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | 9,500.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | 01 | | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | 9,500.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | | 01 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 9,500.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | | | 01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 9,500.0 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | այդ թվում՝ | |
| | | | ՀՀ կառավարություն | 9,500.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի _____-ի N _____ - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11. 35 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով

| Չափորոշիչներ | | Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումները նշված են փակագծերում) ոչ ֆինանսական ցուցանիշներ | ֆինանսական ցուցանիշներ |
|---|---|---|---|
| | | տարի | տարի |
| **ՄԱՍ Բ: Կառավարչական հիմնարկի անմիջական գործունեության արդյունքները**<br>**1. Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշները** | | | |
| Ծրագրային դասիչ: Ը001 / ԱԾ01 | Անվանումը<br>Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում կանոնակարգման ծառայություններ<br>Նկարագրությունը<br>Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում քաղաքականության և լիցենզավորման ծառայություններ, մոնիտորինգի տեխնիկական պահանջների կատարման վերահսկողություն, վարչական տույժի կիրառում, ուսումնասիրությունների և ստուգումների իրականացում | | |
| Քանակական | Հեռուստառադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման օրենսդրության պահանջների և լիցենզիայի պայմանների պահպանման նկատմամբ մոնիտորինգ և վերահսկողություն, այդ թվում՝ | | |
| | ա) Երևան քաղաքում հաղորդումների մոնիտորինգ (եթերի դիտման և լսման օրերի թիվը) | | |
| | Երևան քաղաքում հեռուստարընկերությունների թիվը | | |
| | բ) ՀՀ մարզերում հաղորդումների մոնիտորինգ (եթերի դիտման և լսման օրերի թիվը) | (617) | |
| | ՀՀ մարզերում հեռուստարընկերությունների թիվը | | |
| | 2. Հեռուստառադիոհեռարձակման եթերային հաճախությունների հատկացման մրցույթների կազմակերպում | | |
| | ա) կազմակերպված մրցույթների թիվը | | |

| | | | |
|---|---|---|---|
| | բ) Մրցույթների արդյունքում եթերային հեռարձակման հատկացված լիցենզիաների թիվը | | |
| | 3. հեռուստառադիոհաղորդումների կաբելային հեռարձակման լիցենզիաների թիվը | | |
| | 4. Հեռուստառադիոընկերությունների գործունեության հետ կապված դիմումների քննարկում | | |
| | 5. Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում կարգավորող, կանոնակարգող իրավական ակտերի մշակում | | |
| Որակական | Մշակված չէ | | |
| Ժամկետայնության | Մշակված չէ | 0 | X |
| Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | X | (9,500.0) |

Ծրագիրը (ծրագրերը) , որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը
Ը001 *Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում կանոնակարգման ծառայություններ*

Վերջնական արդյունքի նկարագրությունը
***Նպաստում է*** հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովմանը, հեղինակային իրավունքի պաշտպանմանը

Ծառայություն մատուցողի անվանումը
*Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով*

| Չափորոշիչներ | Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումները նշված են փակագծերում) | |
|---|---|---|
| | ոչ ֆինանսական ցուցանիշներ | ֆինանսական ցուցանիշներ |
| | տարի | տարի |

**2. Հանրային սեփականության կառավարման արդյունքների ցուցանիշները**
**2.1.Կարողությունների զարգացում**
**2.1.1. Ֆիզիկական կապիտալ, կառավարչական հիմնարկի կողմից ուղղակիորեն օգտագործվող ակտիվներ(ակտիվների ձեռք բերում, կառուցում կամ հիմնանորոգում)**

| Ծրագրային դասիչը | | Ակտիվի անվանումը<br>Վարչական սարքավորումներ<br>Նկարագրությունը<br>Վարչական սարքավորումների (համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի և կահույքի) ձեռք բերում | | |
|---|---|---|---|---|
| Ս001 | Կ201 | | | |
| Քանակական | | Կիրառելի չէ | | |
| Ակտիվի ծառայության կանխատեսվող ժամկետը | | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Տվյալ բյուջետային տարվան նախորդող բյուջետային տարիների ընթացքում ակտիվի վրա կատարված ծախսերը (հազ. դրամ) | Մշակված չէ | 0 | X |
| Տվյալ տարվա պետական բյուջեից ակտիվի ձեռք բերման, կառուցման կամ հիմնանորոգման վրա կատարված ծախսերը (հազ. դրամ) | | X | 24,500.0 |
| Ակտիվն օգտագործող կազմակերպության անվանումը<br>***Հեռուսպարեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով*** | | | |
| Փոխարինվող ակտիվների նկարագրությունը<br>Կիրառելի չէ | | | |
| Ազդեցությունը կազմակերպության կարողություններ զարգացման վրա<br>Ակտիվն անհրաժեշտ է << Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում կանոնակարգման ծառայություններ>> ծրագրի ապահովման և բարելավման համար | | | |
| Մասնավորապես ազդեցությունը՝ | | | |
| Քանակական, որոկական, ժամկետայնության և այլ չափորոշիչների փոփոխության վրա | Ակտիվն անհրաժեշտ է << Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում կանոնակարգման ծառայություններ>> ծրագրի ապահովման և բարելավման համար | | |
| Ծախսային արդյունավետության բարելավման վրա | Կիրառելի չէ | | |
| Ծրագիրը (ծրագրերը) , որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը<br>***Հեռուսպարեսության և ռադիոյի բնագավառում կանոնակարգման ծառայություններ*** | | | |
| Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Այս ծրագիրը կնպաստի Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից իրականացվող մոնիտորինգի, տեխնիկական պահանջների կատարման վերահսկողության, ուսումնասիրությունների և ստուգումների իրականացման աշխատանքների արդյունավետությանը | | | |
| Ծառայություն մատուցողի անվանումը<br>***Հեռուսպարեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով*** | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի ___-ի N ____- Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ N 10 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Անվանումը | Գնման ձևը | Չափի միավորը | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) | |
|---|---|---|---|---|
| | | | քանակը | գումարը (հազ. դրամ) |
| Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով | | | | (9,.500.0) |
| Բաժին N 08, Խումբ N 03, Դաս N 01 Հեռուստառադիոհաղորդումներ | | | | (9,.500.0) |
| 01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններ պահպանում | | | | (9,500.0) |
| ՄԱՍ II. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | (5,500.0) |
| Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայություններ | ԲԸԱՀ | դրամ | | (2,000.0) |
| Ընդհանուր օգտագործման միջքաղաքային հեռախոսացանցի ծառայություններ | ԲԸԱՀ | դրամ | | (3,500.0) |
| ՄԱՍ III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | (4,000.0) |
| Մոնիտորինգի իրականացում | ԲԸ | դրամ | (4) | (4,000.0) |
| Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով | | | | 24,500.0 |
| Բաժին N 11, Խումբ N 01, Դաս N 01 ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | | | | 24,500.0 |
| 01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | | | | 24,500.0 |
| ԱՊՐԱՆՔՆԵՐ | | | | 24.500.0 |
| Համակարգիչ | ԲԸԱՀ | հատ | 26 | 7,020.0 |
| Տպիչ սարք | ԲԸԱՀ | հատ | 2 | 240.0 |
| Մոնիտոր | ԲԸԱՀ | հատ | 34 | 3,740.0 |
| Անխափան սնուցման սարք | ԲԸԱՀ | հատ | 31 | 3,720.0 |
| Անխափան սնուցման սարք | ԲԸԱՀ | հատ | 1 | 225.0 |
| Համակարգչ. Ցանցի կարգավորիչ | ԲԸԱՀ | հատ | 3 | 330.0 |
| Փոքր ունակությամբ հեռախոսակայան | ԲԸԱՀ | հատ | 1 | 400.0 |
| Գրասեղան | ԲԸԱՀ | հատ | 30 | 2,250.0 |
| Կոնֆերենտ սեղան կոմպ | ԲԸԱՀ | հատ | 1 | 300.0 |
| Գրապահարան | ԲԸԱՀ | հատ | 10 | 700.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Զգեստապահարան | ԲԸԱՀ | հատ | 10 | 800.0 |
| Հեռախոսի սեղան | ԲԸԱՀ | հատ | 10 | 300.0 |
| Հեռախոսի ապարատ | ԲԸԱՀ | հատ | 11 | 220.0 |
| Աթոռ հոլովակներով | ԲԸԱՀ | հատ | 10 | 450.0 |
| Աթոռ | ԲԸԱՀ | հատ | 80 | 960.0 |
| Բազմոց բազկաթոռ կոմպլ | ԲԸԱՀ | հատ | 2 | 1,100.0 |
| Լրագրասեղան | ԲԸԱՀ | հատ | 3 | 90.0 |
| Հեռուստացույց | ԲԸԱՀ | հատ | 1 | 450.0 |
| Հեռուստացույցի տակդիր | ԲԸԱՀ | հատ | 4 | 120.0 |
| Փոշեկուլ | ԲԸԱՀ | հատ | 3 | 150.0 |
| Սառնարան | ԲԸԱՀ | հատ | 2 | 200.0 |
| Շերտավարագույր | ԲԸԱՀ | քառ. մ | 147 | 735.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության սույն որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 12 որոշմամբ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին հատկացված նոր տարածքի աշխատանքային սենյակների և նիստերի դահլիճի կահավորման, տեղեկատվական ցանցի և հաղորդակցական համակարգի ստեղծման, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի մշտադիտարկման համակարգի համալրման և արդիականացման պահանջով: Հաշվի առնելով ժամանակի սղությունը (մինչև տարեվերջ մնացել է 15 օր)՝ անհրաժեշտ է գնումներն իրականացնել բանակցային ընթացակարգ կիրառելու միջոցով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգի:

Հանձնաժողովի նախագահ Գ. Ամալյան

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին**

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը իրավական ակտն ընդունելու դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին**

Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը իրավական ակտն ընդունելու դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Հանձնաժողովի նախագահ Գ. Ամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 04
Ֆաքս (+374 10) 52 42 82
Էլ. փոստ: minfin@minfin.am
Վեբ կայք: www.minfin.am

13.12.11. №1/4.1-2/89150-11

Ձեր № ____________

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային
հանձնաժողովի նախագահ
պարոն Գրիգոր Ամալյանին

*Ի պատասխան Ձեր 2011թ. դեկտեմբերի 13-ի*
*N 01-443 գրության*

Հարգելի պարոն Ամալյան

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝ Վաչե Գաբրիելյան

Գ. Գրիգորյան
595280

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՄՏԻՑ № 435
«14» 12 2011 թ.